ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

«ՀՀ ՏՄՊՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով իրականացվող գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

19.02.2019թ.

ք. Երևան
ժամը՝ 10:00
Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Խաչիկ Կարապետյան – Հանձնաժողովի նախագահի խորհրդական,

Հանձնաժողովի անդամներ՝

Նանե Քալաշյան - Հանձնաժողովի վերահսկողության վարչության ստուգումների բաժնի առաջատար մասնագետ,
Հայկ Սարգսյան - Հանձնաժողովի վերլուծության և մրցակցության գնահատման վարչության 2-րդ բաժնի առաջատար մասնագետ,
Գարիկ Մկրտչյան - Հանձնաժողովի պարետ,
Թոմաս Զուլալյան – Հանձնաժողովի տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգող-համակարգչային ցանցի ադմինիստրատոր,

Հանձնաժողովի քարտուղար՝

Տիգրան Սաֆարյան – Հանձնաժողովի վերլուծության և մրցակցության գնահատման վարչության 2-րդ բաժնի առաջատար մասնագետ:

1. **«ՀՀ ՏՄՊՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով իրականացվող գնման ընթացակարգի հայտերի բացման մասին**

(Խ. Կարապետյան)

Ընդունել ի գիտություն, որ՝

1.1. ՀՀ ՏՄՊՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով իրականացվող գնման ընթացակարգին մասնակցելու հրավերը հրապարակվել է eauction.armeps.am էլեկտրոնային կայքում 2019 թվականի փետրվարի 6-ին:

1.2. Հայտերի ընդունման վերջնաժամկետ է սահմանվել 2019 թվականի փետրվարի 14-ը, իսկ հակադարձ աճուրդի վերջնաժամկետ է սահմանվել 2019 թվականի փետրվարի 18-ը ժամը 10:00-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

2. **Տեղեկություններ գնման ընթացակարգին մասնակիցների ներկայացրած հայտերի վերաբերյալ.**

Հ/հ	Մասնակցի անվանումը	Գնային առաջարկը ներկայացնելու ամսաթիվը	Ներկայացված Դիմում-հայտարարության համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին	Մասնակցի հասցեն	Մասնակցի կոնտակտային տվյալները
1	«ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ	13.02.2019թ.	բավարար	Ք. Երևան, Պուշկինի փող., 1 շենք	tender@cps.am
2	«ՖԼԷԾ» ՍՊԸ	13.02.2019թ.	բավարար	Ք. Երևան, Եզնիկ Կողբացու փող., 30 շենք	flashltdtender@gmail.com

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

3. **Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին**

(Խ. Կարապետյան)

3.1. Մասնակիցների գնային առաջարկները հետևյալն են.

ՀՀ դրամ

				Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցության իրավունք
Հ/Հ	Զբաղեցրած տեղ	Ընկերություն	Նախահաշվային գին	Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	1	«ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ	4474800	3525600	20%	4230720	3525600	20%	4230720	
1	2	«ՖԼԵԾ» ՍՊԸ	4474800	3729000	20%	4474800	3729000	20%	4474800	

3.2. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

4. «ՀՀ ՏՄՊՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի նիստի արդյունքների ամփոփման մասին.

4.1 Հայտերի գնահատումն իրականացվել է eauction.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով, գնման հայտերի վերաբերյալ հարցումներ չեն իրականացվել: Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել: Գնային առաջարկների գնահատումն իրականացվել է հրավերով սահմանված կարգով՝ առանց ԱԱՀ-ի հաշվարկման:

4.2 Հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

«ՀՀ ՏՄՊՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով մրցույթի N1 չափաբաժնում առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել.

Չափաբաժին	Մասնակցի զբաղեցրած տեղը	Մասնակցի անվանումը
1	1	«ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ

4.3 Գնահատող հանձնաժողովի նիստը հետաձգել մինչև 3 /երեք/ աշխատանքային օրով՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցից պահանջել ներկայացնել՝ հրավերով և հայտով սահմանված որակավորման չափորոշիչները հիմնավորող փաստաթղթերը, և ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն ՀՀ Կառավարության առընթեր Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հարկային պարտավորությունների վերաբերյալ: Դրական եզրակացության դեպքում, ինչպես նաև հրավերով և հայտով սահմանված որակավորման չափորոշիչները հիմնավորող փաստաթղթերը ներկայացված լինելու դեպքում առաջին տեղ զբաղեցրաց մասնակցին կառաջարկվի կնքել պայմանագիր:

4.4 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 5.3 կետում նշված փաստաթղթերը ստանալու հաջորդ աշխատանքային օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Խ.Կարապետյան

Անդամներ՝ _____ Ն. Քալաշյան

_____ Հ. Սարգսյան

_____ Գ. Մկրտչյան

_____ Թ. Զուլալյան

Քարտուղար՝ _____ Տ. Սաֆարյան